

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2014թ.

N____-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 984-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Պիտանիության ժամկետում չիրացված՝ դրոշմավորված ապրանքների դուրսգրման կարգը սահմանելու մասին» N 984-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետում «սահմանված պահանջին» բառերը փոխարինել «և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին» բառերով:

2) 6-րդ կետի՝

ա. 3-րդ ենթակետը «տարողությունների» բառից հետո լրացնել «(ծավալների, քաշերի կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորների)» բառերով,

բ. 5-րդ ենթակետը «ապատարայավորումը» բառից հետո լրացնել «(ապափաթեթավորումը)» բառով,

գ. 6-րդ ենթակետից հանել «՝ հյուսիսի, ջրերի, գարեջրի, կոկտեյլների կամ ըմպելիքների» բառերը.

3) 7-րդ կետը «տարողությունների» բառից հետո լրացնել «(ծավալների, քաշերի կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորների)» բառերով.

4) 11-րդ կետը «տարողությամբ» բառից հետո լրացնել «(ծավալով, քաշով կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորով)» բառերով.

5) 12-րդ կետը՝

ա. «տարողությունների» բառից հետո լրացնել «(ծավալների, քաշերի կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորների)» բառերով,

բ. «ապատարայավորման» բառից հետո լրացնել «(ապափաթեթավորման)» բառով.

6) 13-րդ կետը «ապատարայավորումից» բառից հետո լրացնել «(ապափաթեթավորումից)» բառով.

7) 14-րդ կետում՝

ա. 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պիտանիության ժամկետը լրացրած ապրանքների դուրսգրման վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ ակտի կազմման ամսաթիվը) արտացոլվում են դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարը հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) հարկ վճարողին վերադարձման դիմումի մեջ, ինչպես նաև ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման հաշվետվության մեջ:»,

բ. «տարողություններին» բառից հետո լրացնել «(ծավալներին, քաշերին կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորներին)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: